

Խնդիրը միայն փողը չէ. Հարցազրույց պատմաբանասեր, կինոգետ, գրող, թարգմանիչ Արծվի Բախչինյանի հետ.

Խնդիրը միայն փողը չէ

Հարցազրույց պատմաբանասեր, կինոգետ, գրող, թարգմանիչ Արծվի Բախչինյանի հետ.

- Ո՞րն է մշակութային քաղաքականության մասին Ձեր պատկերացումը:

- Մշակույթի հանդեպ իշխանության պաշտոնական վերաբերմունքը և մշակույթի զարգացմանն ուղղված նրա գործունեությունը կարող ենք համարել մշակութային քաղաքականություն: Այսինքն՝ մասնագետներից կազմված պետական, իշխանության մաս կազմող մի բարձրագույն մարմին, որը զբաղվում է ոչ թե մշակութային միջոցառումներ կազմակերպելով, այլ ստեղծում է այն մթնոլորտը, սահմանում է այն չափանիշները, որով տվյալ երկրի մշակույթը պետք է զարգանա:

- Պարոն Բախչինյան, նորանկախ Հայաստանում նկարահանվել են ֆիլմեր, բայց մի կողմից այդ ֆիլմերն այդպես էլ անձանոթ են մնում հանդիսատեսին, որովհետև հեռուստատեսությունները հրաժարվում են վճարել Կինոկենտրոնին դրանց ցուցադրման իրավունքի համար նախատեսված ոչ այնքան մեծ գումարները, և այդ ֆիլմերն այդպես էլ չեն ցուցադրվում, մյուս կողմից՝ «Մոսկվա» կինոթատրոնի տնօրինությունը պնդում է, որ նոր նկարահանված ֆիլմերի ցուցադրությունն անցնում է կիսադատարկ դահլիճներում՝ դա բացատրելով նոր արտադրության հայկական ֆիլմերի նկատմամբ հանդիսատեսի հետաքրքրված չլինելով: Այդ ֆիլմերը ցուցադրվում են միջազգային կինոփառատոներում, անգամ «Օսկար» մրցանակաբաշխության հայտ ներկայացնելու դեպքեր են եղել, Կաննի փառատոնում են ներկայացվել, և ասում են, որ հայկական կինոտաղավարների հանդեպ եղել է հետաքրքրություն, բայց, ըստ էության, հայկական կինոն չի վաճառվում: Ինչու՞ լավ չեն հայկական կինոարտադրության գործերը:

- Այս հարցերի շուրջ ամեն տարի բարձրաձայնում ենք, բայց սայլը տեղից չի շարժվում: Անցյալ 25-30 տարիներին մենք կորցրինք մի կարևոր բան՝ մեր կինոմթնոլորտը, գեղարվեստում արժեքային չափանիշներն ու արժեհամակարգը: Իբրև թե փորձելով հարմարվել նոր ժամանակներին՝ տուրք տվեցինք նոր հոսանքներին, նոր ձևերին ու բովանդակությանը: Էժանագին կինոկատակերգությունները (որոնք կինո չես համարի՝ թեպետ կինո-ձևաչափին) հաջողությամբ ցուցադրվում են լեփ-լեցուն կինոդահլիճներում, հասնում ժողովրդական լայն զանգվածներին: Բավական է նշել, որ «Սուպեր մամա» կատակերգությունը «Մոսկվա» կինոթատրոնում գրանցել է աննախադեպ հաճախելիություն: Գոնե այդ հակակինոյից ստացված եկամուտն ուղղվեր հայկական կինոյի զարգացմանը: Իսկ դա տեղի չի ունենում. գուցե եկամուտներն այդ աստիճան մեծ չեն, չգիտեմ: Իսկ ինչու՞ պիտի ակնկալենք, որ աշխարհը հետաքրքրվի հայ կինոյով: Նախ՝ մենք հասկանանք, թե հստակ ի՞նչ ենք ուզում կինոյում՝ հասնել Հոլիվուդին ու «Բլոքբասթերնե՞ր» նկարել, աշխարհին ցույց տալ հայի ով լինե՞լը, տեսա՞կը, ապրելակե՞րպը, թե՞ ի վերջո հասկանանք, որ քանի որ կինոն թանկ հաճույք է, մեզ նման փոքր և աղքատ երկիրը ճիշտ կլինի կենտրոնանա ցածր բյուջեով ֆիլմերի վրա և փորձի ֆիլմարտադրությունը զարգացնել ա՛յդ ուղղությամբ, այլ ոչ պետությունը տարեկան մեծ գումարներ հատկացնի մե՛կ ֆիլմի նկարահանմանը, բավարարի մե՛կ ռեժիսորի հավակնությունները, այդ ֆիլմն այդպես էլ չհասնի հանդիսատեսին, անգամ գնա ինչ-որ փառատոնում մրցանակ շահի և այդքանով համարենք ավարտված մեկ ֆիլմի պատմությունը: Երբ խոսում եմ խախտված չափանիշների մասին՝ նկատի ունեմ նաև, որ այսօր կինո շատերը նկարում են գրանտներ շահելու հույսով՝ չարչրկելով հայ-ադրբեջանական, հայ-թուրքական բարեկամության թեմաները, կամ հատկապես երիտասարդները մտահոգված են ոչ թե արվեստի լուրջ գործ ստեղծելու, այլ սեփական հավակնությունները փառատոններում ու այլուր բավարարելու համար:

- Իսկ ի՞նչ է կոմերցիոն կինոն: Ինչպե՞ս կձևակերպեք:

- Կոմերցիոն կամ «մեյնսթրիմ» կինոն զանգվածներին ուղղված ոչ խորը բովանդակությամբ, սյուժետային դինամիկ զարգացմամբ այն արտադրանքն է, որը հաճախ հիմնված է արտաքին էֆեկտների վրա՝

գեղեցիկ դեմքեր և մարմիններ, գրավիչ միջավայր, զգայացունց տեսարաններ, արկածներ և այլն: Ինքնին դա վատ չէ, կինոյի դեմքերից մեկն է, ու պիտի ընդունել, որ մարդկության մեծ մասը, լինելով մեր դարի սպառողական հանրության անդամ, նախապատվությունը տալիս է հենց այդ կարգի կինոյին. սա օրինաչափ երևույթ է: Անրի Վերնոյը ժամանակին լավ է ասել. «Ես նկարում եմ արկածային և դետեկտիվ ֆիլմեր զանգվածների համար, որովհետև համոզված եմ, որ մեկ միլիոն հանդիսատես՝ չի նշանակում մեկ միլիոն ապուշ»: Եթե Հայաստանում այնպիսի կոմերցիոն ֆիլմ նկարահանվեր, որ դիտելիս գոնե ապահովվեր մակարդակով ժամանց, ունենայինք պարզապես ազգային ժամանց, էլի լավ կլիներ, բայց դա էլ չունենք: Ունենք էժանագին կատակերգություններ, որոնք արվեստի գործ չեն: Ես կողմ եմ զանգվածների պահանջարկը վայելող գրագետ կոմերցիոն կինոյին: Ես հետևում եմ, թե ուր է հասել համաշխարհային կինոն «մեյնսթրիմի» բնագավառում, թե որքան կարող են նոր տեխնոլոգիաները գերիշխել կինոյում: Բայց կարծում եմ, որ հայ կինոյի գեղարվեստական արտահայտման ձևերը մի քիչ այլ պիտի լինեն, այն կինոն, որպիսին ստեղծելու նկարտումներ ունեն հայ ռեժիսորները, փոքր-քիչ այլ ճանապարհ ունի գնալու: Սակայն դեռևս չի նկատվում այն գեղագիտությունը, որով կարող էր ընթանալ 21-րդ դարի հայ կինոն. գոնե ես չեմ նկատում: Գուցե մեզանում արմատացած սերիալային մշակո՞ւյթն է դրան խանգարում, չգիտեմ: Թե ինչ են հրամցնում մեր սերիալները, ավելի լավ է՝ լռենք. նույնիսկ լավ սերիալ չենք կարողանում ստեղծել՝ այս հարցում չհետևելով հնդկական կամ բրազիլական սերիալներին, որոնք նույնպես ունենալով դատարկ, անիմաստ սյուժեներ, գոնե գրավում են գույնով, ինտրիգով, գեղեցիկ հագուկապով, ոճով...

- Ինչպես նշում եք՝ կան ռեժիսորներ, որ փորձում են բարձրարժեք կինո նկարել: Նկատե՞լ եք, որ ռեժիսորներից շատերը հակված են ստեղծելու հեղինակային կինո՝ և՛ սցենարն իրենք գրեն, և՛ գրեն, և՛ խաղան, ընդհուպ՝ երաժշտությունն իրենք հեղինակեն: Հեղինակային կինոն հրաշալի է, բայց բոլորը չէ, որ Չարլի Չապլին են: Եվ Չապլինն էլ մինչև հեղինակային կինո նկարելը երկար ժամանակ կինոարտադրության մեջ է եղել, ուրիշ ռեժիսորների ֆիլմերում է խաղացել, ռեժիսորի օգնական է եղել և այլն:

Օրինակ, Փարաջանովին, ում նկարիչ ընդհանրապես պետք չէր, «Նոան գույնը» ֆիլմում բեմադրող նկարիչ ուներ՝ Ստեփան Անդրանիկյանն էր:

- Կինոն, առհասարակ, հեղինակային արվեստ է: Ճիշտ է, այն ստեղծվում է համատեղ ուժերով, բայց, ի վերջո, ռեժիսորին է պատկանում առաջին և վերջին խոսքը: Իրականում վատ բան չեմ տեսնում, երբ ֆիլմի տիտրերում անընդհատ ռեժիսորի անունն է գրվում: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես է դա արվում: Եթե ամեն ինչ արված է տաղանդավոր ձևով, ապա գլուխ խոնարհենք նրա առաջ: Վերջին տարիների մեր հեղինակային կինոյում ես չեմ տեսնում ռեժիսորի՝ անձը շատ շեշտելու միտում: Շատ ուրիշ խնդիրներ կան: Ասենք, մարդն ավելի լավ պրոդյուսեր է, քան՝ ռեժիսոր, կամ ունեն փայլուն գաղափարներ, բայց չեն կարողանում կինոյի լեզվով արտահայտել: Հեղինակային (և ոչ միայն) կինո նկարելու արկածախնդրությունը ստանձնած մարդը պետք է այնքան լավ իմանա համաշխարհային և ժամանակակից կինոն: Մինդեռ «Ոսկե ծիրանի» կամ այլ փառատոների ժամանակ, երբ ցուցադրվում են բարձրարվեստ ֆիլմեր, դահլիճում չեմ տեսնում միջին սերնդի և երիտասարդ ռեժիսորներից շատերին: Անընդհատ հեծանիվ հայտնաբերելով կամ վաղուց ասված-մաշված ձևերով կինո ստեղծելով՝ ոչ ոքի չես զարմացնի:

- Արդյո՞ք կարող է լավ կինո ստեղծվել միանգամից՝ առանց երկար ու շատ աշխատելու, այդ պրոցեսում թրծվելու, առանց ձեռքն ու աչքը բացելու, նույնիսկ՝ ոչ սեփական, առհասարակ, ուրիշի ֆիլմերում ամենահամեստ աշխատանքն անելով: Իսկ Հայաստանում քիչ է նկարվում կինո: Գուցե նաև դրանի՞ց է տուժում կինոն՝ մեծ հաշվով: Ֆրենսիս Ֆորդ Կոպպոլայի օրինակն է հաճախ նշվում, թե նա իր առաջին՝ «Կնքահայրը» ֆիլմով շոնդայից հաջողություն ունեցավ: Բայց չէ՞ որ Կոպպոլան մինչև հեղինակային ֆիլմի նկարահանումը երկար աշխատել է ուրիշ հեղինակների ֆիլմերում: Այնպես չէ, որ նա կրթություն ստացավ, միանգամից շատ փող վստահեցին նրան, նա էլ վերցրեց կամերան և նկարեց ֆիլմարտադրության գոհարներից մեկը:

- Իհարկե, շատ կարևոր է միշտ պրոցեսի մեջ լինելը: Ինչու՞ ոչ, սկսնակը պիտի շտատիվներ էլ տեղափոխի, ասիստենտություն էլ անի, կինոյի խոհանոցի մեջ շարունակ եփվի: Իսկապես, հազվադեպ է լինում, որ միանգամից մեծ արժեք է ստեղծվում: Գիտենք, արվեստագետները հիմնականում հավակնոտ են, բայց և հասկանում են այն երիտասարդ ռեժիսորներին, որ ասում են. «Հո չե՞մ գնալու սերիալ նկարող ռեժիսորի ասիստենտը լինեմ»: Բայց ուրիշ օրինակ էլ բերեմ՝ մեր երիտասարդ ռեժիսորներից մեկին, որի վավերագրական ֆիլմը փառատոներում մրցանակներ է շահում, վերջերս ասացի. «Եթե մյուս տարի ամերիկացի ընկերս գա Հայաստան ֆիլմ նկարելու, կուզե՞ս մասնակցել»: Նա ասաց. «Պատրաստ եմ նույնիսկ հասարակ սուրճ եփող լինել նրա մոտ»: Այս համեստությունը իսկապես գնահատելի է:

- Կինոյի մասին օրենքի ընդունման անհրաժեշտության շուրջ բանավեճերում շեշտվում է, որ կարևոր են Հայաստանի և հարուստ կինոարտադրություն ունեցող երկրների՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի հետ փոխհամաձայնագրերը: Ենթադրենք, եղան այդ պայմանավորվածությունները: Բայց կարո՞ղ ենք վստահ լինել, որ այս պարագայում հայկական կինոյի խնդիրները, թեկուզ մասամբ, կլուծվեն:

- Վստահ, իհարկե, չենք կարող լինել: Բայց այդ պայմանավորվածությունները հո չե՞ն նպաստելու կինոյում տաղանդների ի հայտ գալուն: Տաղանդավոր Փարաջանովը խորհրդային պայմաններում նկարահանեց «Նռան գույնը»: Իհարկե, շատ կարևոր է, որ քո երկրի արտադրությունը կապ ունենա այլ երկրների կինոստուդիաների հետ: Բայց տեսեք, հիմա մենք չունենք այդ օրենքը, բայց նկարվում են, չե՞, համատեղ ֆիլմեր: Քանի տարի է ասում եմ՝ ես հայ կինոյի ապագան տեսնում եմ փոքր բյուջեով և համատեղ արտադրության ֆիլմերի մեջ: Նկարահանվեց Անահիտ Աբադի «Եվան», որն աշխարհը ճանաչում է որպես հայկական ֆիլմ, որը որպես հայկական կինոնկար՝ առաջին անգամ ներառվել էր «Օսկար» մրցանակաբաշխության «կարճ ցուցակում», բայց չկարողացավ առաջ գնալ, որովհետև մեր ռեժիսորներից մեկը Ամերիկյան կինոակադեմիային 37 թվի ոգով «մատերիալ» գրեց այդ ֆիլմի դեմ (այս մասին առանձնապես չբարձրաձայնվեց, բայց ես հիմա չեմ կարող չասել այդ մասին): Ֆիլմը

նկարահանվել էր Հայաստանում, հայ դերասանների մասնակցությամբ, թեման հայկական էր, բայց ֆինանսավորման առյուծի բաժինն իրանական կողմից էր: Այսինքն՝ մենք արդեն հաջող համագործակցության նախադեպ ունենք, և հատուկ պետք չէ սևեռվել կինոյի օրենքի վրա՝ համատեղ կինոարտադրություն կազմակերպելու համար: Հիանալի է, որ մեր ռեժիսորները մասնակցում են տարբեր ֆորումների, սեմինարների, փորձում են «գործի դնել» իրենց կինոնախագծերը: Դեպքեր են եղել, երբ թե՛ ֆինանսավորում է եղել, թե՛ համատեղ արտադրության պայմանագիրն է եղել, բայց արդյունքում ստացվել է անհաջող ֆիլմ: Այնպես որ, այո, ֆինանսավորման հարցը պետք չէ այդքան չարկչրկել: Իհարկե, ասենք, Կիլիկյան Հայաստանի մասին ֆիլմ նկարելու նախագծի համար մեծ գումարներ են պետք, բայց այս տեսակ ֆիլմ ունենալու համար պետք է զսպել ախորժակը, եթե չունենք հարուստ համագործակիցներ: Ավելի լավ է մեր ոտքերի չափ ձգենք մեր վերմակը:

- **Չե՞ք կարծում, որ հայկական կինոարտադրությունն ունի հատկապես կինոպրոդյուսերների, նաև՝ սցենարիստների, երկրորդ ռեժիսորների, լավ լուսավորողների արտադրության խնդիր:** Վրացական կինոն իր հաջողության գագաթնակետին էր, որովհետև Վրաստանում պետական մակարդակով պահանջվում և օժանդակվում էր համաշխարհային գրականության թարգմանությունը, դրա սցենարական մշակումները՝ այդպես ստեղծելով սցենարիստների դպրոց:

- Առհասարակ, արվեստի կառավարումը մեր մշակույթի զարգացման գործում կադացող հարցերից է: Մեր գրողները չունեն գրական գործակալներ, երաժիշտները չունեն իմպրեսարիոներ, արտ-մենեջմենթի ինստիտուտը մեզանում դեռ խեղճ վիճակում է: Մինչդեռ համապատասխան արվեստի կառավարման ինստիտուտի առկայության դեպքում կկարողանայինք մեր ունեցած «ապրանքը» պրոֆեսիոնալ ձևով ներկայացնել աշխարհին, ստեղծել կապեր, մեծացնել նրա շրջանառությունն ու ապահովել զարգացում: Մենք ունենք փայլուն գրականություն, բայց չունենք այդ գրականությունը սցենարի վերածող օղակը: Ռեժիսորներն իրենք են նախընտրում գրել իրենց սցենարը՝ համարելով, որ իրենցից լավ ուրիշ ոչ ոք չի կարող անել: Վրացիները,

կարծում եմ, կազմակերպչական և շատ ուրիշ հարցերում էլ, մեզնից միշտ ավելի արագ և ճիշտ են կողմնորոշվել: Այս տարի Գերմանիայում Մայնի Ֆրանկֆուրտի գրքի միջազգային տոնավաճառում վրացիներն ամենուրեք իշխում էին: Պարզվում է՝ անցած մեկ տարվա ընթացքում վրացի հեղինակների երկու հարյուր գիրք է թարգմանաբար հրատարակվել գերմաներեն: Եվ սա ընդամենը՝ մեկ օտար լեզվով: Իսկ մենք չունենք, ինչ է, ժամանակակից շնորհալի գրողներ, որ արժանի են թարգմանվելու աշխարհի բոլոր լեզուներով և որոնց գործերից լավ ֆիլմեր ու ներկայացումներ կստացվեն, բայց ի՞նչ է արվում: Հասկացանք, մենք վրացիների հնարավորությունները չունենք, ծով չունենք, բայց ունենք այլ ռեսուրսներ, որոնք անբավարար են օգտագործվում: Մենք էլ կարող ենք օգտագործել մեր սփյուռքի գործոնը, մեր միջազգային կապերը, ինչու ոչ՝ նաև դրսի նյութական օժանդակությունը՝ հանրաճանաչ դարձնելու հայ ժամանակակից հեղինակներին ու մշակույթը, բայց կատարվող աշխատանքը հեռու է գոհացուցիչ լինելուց: Տվյալ հարցում մշակույթի նախարարության դերը, կարծում եմ, կինոարտադրության առաջընթացի համար պակասող այդ կարևորագույն օղակների ստեղծումն ու զարգացումը պիտի լինի: Մենք, օրինակ, չունենք համաշխարհային լավագույն սցենարների թարգմանված անթոլոգիա, սցենար գրելու ուղեցույցեր: Ճիշտ է, կազմակերպվում են սցենար գրելու վարպետության դասեր, նախարարությանը կից ստեղծվել է մարմին, որ զբաղվում է ժամանակակից գրողներին դրսում ներկայացնելու գործով և իմ լավ բարեկամ Հրաչյա Սարիբեկյանն էլ դեկավարում է այդ գործը, բայց դա այնքան քիչ է: Մեծ հաշվով թարգմանչական, գրահրատակչական, սցենարական, արտ-մենեջմենթի կառավարման հարցերում պակասում է ինստիտուցիոնալ մոտեցումը:

- Վերջերս գիրք եք հրատարակել՝ «Ամենագեղեցիկ արվեստի նվիրյալները», որ ընդգրկում է պարարվեստի, մասնավորապես՝ բալետի գործիչների հետ Ձեր վարած հարցազրույցները: Կինոյի և բալետի խնդիրները փորձենք դիտարկել նույն համապատկերում՝ կարո՞ղ են աղքատ երկրներն ունենալ կինոարտադրություն և բալետ: Երբ Էմիր Կուստուրիցան Հայաստանում էր, նրան հարցրին, թե արդյո՞ք աղքատ երկիրը կարող է կինոարտադրություն ունենալ: Կուստուրիցան ասաց՝ ոչ:

Եթե փորձենք ի մի բերել, թե որ երկրներում է կայացած բալետի դպրոցը, կտեսնենք, որ դրանք նախկին կամ ներկա մեծապետական կայսրություններ են՝ Ֆրանսիա, Ռուսաստան, Չինաստան, Անգլիա: Հայկական բալետը շտկելու համար պարբերաբար փոխվում է Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի տնօրենը, գեղարվեստական ղեկավարը, գլխավոր բալետմայստերը, բայց այդ փոփոխություններից բալետի վիճակի բարելավում, ըստ էության, առանձնապես չի լինում: Արդյո՞ք բալետի զարգացումն էլ կինոյի պես չի ենթադրում կենտրոնաձիգ, ուժեղ պետության պատվեր:

- Բալետը մայրաքաղաքային արվեստ է: Հայաստանում 1960-ականներին եղել է բալետային բուլմ, երբ խաղացանկում կար 50 ներկայացում, կային բազմաթիվ փայլուն արտիստներ: Հասկանալի է, որ հայ բալետը խորհրդային բալետի մի մասն էր, բայց կարևորն այն էր, որ Հայաստանի մայրաքաղաքում կար բալետային ուժեղ կոլեկտիվ, որը քաղաքային մշակութային կյանքի բաղկացուցիչ մաս էր: Այն ժամանակ նույնպես բալետի արտիստի աշխատավարձը շատ բարձր չէր, բայց բավարար էր, որպեսզի պարողը չմտածեր այլ աշխատանքի կամ արտագաղթելու մասին: Փոքր երկիրն էլ միանշանակ կերպով կարող է ունենալ բալետային լավ խումբ, հատկապես՝ ժամանակակից բալետի, այն դասականի պես չէ, որը ենթադրում է թանկարժեք դեկորացիաներ. չոր տախտակներով բեմն էլ բավական է, եթե կա տաղանդավոր ստեղծագործող: Այստեղ էլ խնդիրը կատարողական և բեմադրական տաղանդի մեջ է: Մենք այսօր ունենք Ռիմա Պիպոյանի պես ժամանակակից խորեոգրաֆիայի փայլուն ներկայացուցիչ, որն այս տարի հաղթանակներով վերադարձավ մի քանի միջազգային փառատոներից: Մեր Ռիման, իսկապես, միջազգային մակարդակի խորեոգրաֆ է: Մենք կարող էինք ունենալ աշխարհի լավագույն բալետային խմբերից մեկը՝ նկատի ունենալով այն հզոր ներուժը, որ մինչև վերջերս ունեինք հատկապես տղամարդ պարողների առումով (քանի որ նրանք արդեն հերթով թոշակի են գնում), բայց չունեցանք, քանի որ նրանք ստիպված եղան աշխատել արտերկրում: Ցավոք, մեզանում պետականորեն պատշաճ ուշադրություն չի դարձվել արվեստի այս նրբագույն ճյուղին ու նրա ոչ մեծաթիվ մշակներին: Եթե մենք ունենայինք Միխեիլ Սաակաշվիլու պես սրտացավ, ազգային նկարագիր ունեցող նախագահ,

որի առաջին գործերից մեկը եղավ Մեծ թատրոնից Թիֆլիս բերել Նինա Անանիաշվիլին և վերածնել վրացական բալետը, ապա մենք էլ այսօր բալետի ոլորտում այլ իրավիճակ կունենայինք: Եթե ճիշտ ուղղորդվեր մեր բալետի զարգացումը, և մեր տղաները Գերմանիայի, Շվեդիայի կամ ԱՄՆ-ի բալետային հռչակավոր խմբերում հանդես եկած մեր տղաները մնային Հայաստանում, այսօր, այո, պատկերն այլ կլիներ: Ես ճանաչում եմ այդ տղաների մեծ մասին, նրանք անկեղծ հայրենասերներ են ու համոզված եմ, որ քիչ թե շատ բարվոք պայմաններ ապահովելու դեպքում նրանք կմնային Հայաստանում և հայ բալետը կդարձնեին ազգային բրենդ: Եվ դրա համար պարտադիր չէ աշխարհին ներկայանալ «Գայանե» բալետով. ամենևին, այլ մեծ ծախսեր չպահանջող ժամանակակից բեմադրություններ՝ հրաշալի մարզավիճակում գտնվող, բարձր արտիստիզմով օժտված անսամբլով: Մինչդեռ Երևանում այսօր պարարվեստի համար հատուկ բեմահարթակ անգամ չունենք: Ցավոք, բալետի նոր սերնդի մեջ վառ անհատականությունները գնալով պակասում են. ո՞վ կարող է ասել, թե ինչո՞ւ նախորդ սերնդի մեջ առատության եղջյուրի պես սկսեցին թափվել բալետային տաղանդներ, իսկ հիմա աստիճանաբար նրանց թիվը նվազում է: Եվ իհարկե, բալետի նոր սերունդը տեսնում է, որ իրենց մասնագիտությունն այսօր տեղ չունի Հայաստանում. եթե պետք է գիշերը գնա հացի փռում աշխատի, հետո գնա «Ժիզել» պարի, այդպես, իհարկե, բալետ չի զարգանա: Այդուհանդերձ, կարծում եմ, որ եթե ունենանք արվեստից հասկացող ու սրտացավ դեկավարություն՝ վերին թե ներքին էշելոններում, ապա հնարավոր է հայ բալետը վերածնել. դրա ներուժը կա, և գուցե շատ ավելի, քան կինոյի համար:

Մարինա Բաղդադյուլյան